



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

24.05.2018թ.

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ

«Վերջին զանգ» և «Վերջին դաս» հանդիսությունների կապակցությամբ

Սիրելի՛ շրջանավարտներ,

Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ ձեզ՝ դպրոցական Վերջին դասն ազդարարող խորհրդանշական օրվա կապակցությամբ: Հուսով եմ, որ ուսումնառության տարիների ավարտը և հասուն կյանքի շեմ մուտք գործելու սկիզբն ազդարարող «Վերջին զանգի» խորհրդավոր դողանջները մշտապես վառ կմնան ձեր բոլորի հիշողության մեջ:

Իմ շնորհավորանքներն եմ ուղղում նաև ձեզ, հարգարժան մանկավարժներ, քանզի «Վերջին զանգը» ոչ միայն տոնական հանդես է, այլև մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ձեր անմնացորդ նվիրումը և անխոնջ վաստակը յուրովի իմաստավորող գնահատականն ու առհավատյան:

Թանկագի՛ն շրջանավարտներ,

Տոնական այս օրվա շրջանակներում ևս պետք է վստահաբար փաստենք, որ Հայաստանի Հանրապետության ապագան հուսալի ձեռքերում է, քանզի ի դեմս ձեզ մենք ունենք քաղաքացիական բարձր գիտակցությամբ, վեհ ու վսեմ գաղափարներով օժտված արժանապատիվ ու անվեհեր սերունդ: Համոզված եմ, որ դուք հետայսու ևս կդավանեք բարու, գեղեցիկի, ճշմարտության և ազգային միաբանության սրբազան արժեքներին ու ձեր կայուն գիտելիքներով, անսպառ եռանդով, նպատակասլացությամբ ու ողջ ներուժով կգորակցեք մեր մայր հայրենիքի հզորացմանը, բարօրությանը և նրա հարաճուն զարգացմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ և մաղթում բարի երթ: Թո՛ղ իրականություն դառնան ձեր բոլոր իղձերն ու նվիրվեք ձեր գործերին:

Հարգանքով՝



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ